

# LPS Խնամակալություն

## Lanterman-Petris-Short (LPS)

### Օրինագիծ

(LPS Conservatorship)

Welf. & Inst. Code Sections 5350 et seq.

Note: When this publication was originally published, we were known as Protection & Advocacy, Inc. (PAI). In October 2008, we changed our name from PAI to Disability Rights California.

#### Ի՞նչ է LPS ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

LPS Խնամակալությունը այն է երբ դատավորը ձեզ համար մասնակի որոշումներ կայացնելու անհատ է նշանակում: Այս անհատը կոչվում է խնամակալ:

#### ՈՐՏԵ՞Ղ ՈՒՆԵՄ ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ԵԹԵ ՆՇԱՆԱԿՎԵԼ ԵՄ LPS ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

- LPS Խնամակալությունը պարտավոր է ձեզ տեղավորելու ձեր կարիքներին հարմարվող ամենամաքողացված միջավայրում:
- Խնամակալը պետք է օգնություն ցուցաբերի որպեսզի դուք կարողանաք ապրել ձեր սեփական վայրում կամ ընկերոջ եւ կամ ընտանիքի այլ անդամի տանը:
- Դուք իրավունք ունեք ընտանիքի, ընկերների եւ մեծամասնություն կազմող համայնքին շատ մոտ ապրելու:
- Դուք իրավունք ունեք ապրելու այնտեղ որտեղ դուք ավելի կհմտանաք անկախ գործելու կենցաղին:

#### ԵՄ Ե՞ՐԲ ՊԵՏՔ Է ՆՇԱՆԱԿՎԵՄ LPS ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ

Դուք կարող եք նշանակվել LPS խնամակալության եթե դատավորը որոշի որ դուք “լուրջ հաշմանդամ եք”: Սա նշանակում է որ դուք ունեք հոգեկան անկարողություն որի պատճառով դուք չեք կարող հոգալ ձեր սնունդին, հագնվելուն ու պատսպարանին:

#### Ի՞նչ է ՀՈԳԵԿԱՆ ԱՆԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

LPS Օրինագիծը վերաբերվում է “հոգեկան խանգարման”: Դա ընդարձակ բացատրություն է որը ներառում է անհատներ որոնք ախտաճանաչված են Alzheimer հիվանդությամբ, ուղեղի վնասվածքներով կամ այլ օրկանների հետ կապված վիճակներով: Դա միայն մտային տհասության ախտաճանաչում չի ընդգրկում:

#### ԻՆՉՊԵ՞Ս Է ԴԱՏԱՎՈՐԸ ՈՐՈՇՈՒՄ ԵԹԵ ԵՄ ԽՆԱՄԱԿԱԼԻ ԿԱՐԻՔՆ ՈՒՆԵՄ

- Դատավորը վերանայում է խնդրագիրը, որը կարող է ներկայացվել միայն Շրջանի (county) խնամակալության հետաքննիչի կողմից:
- Երկու հոգեբուժներ պետք է հաստատեն դա:
- Ձեզ պետք է տրվի խնդրագրի պատճեն եւ ասվի թե երբ դատավորը ձեզ կկանչի դատական լսումի:

#### Ի՞նչ ԵՆ ԻՄ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵԹԵ ՈՒԶԵՆԱՄ ԱՌԱՐԿԵԼ

- Դուք փաստաբան վարձելու կամ անվճար հանրային պաշտպան ձեռք բերելու իրավունք ունեք:
- Դուք իրավունք ունեք քննական հանձնախմբով (jury) դատավարության:
- Շրջանը պետք է ցույց տա անհրաժեշտությունը “իրավացի կասկածից դուրս ապացույց” ներկայացնելով:

- Դուք իրավունք ունեք լսման ներկա գտնվելու եւ ինքներդ վկայելու կամ ունենաք ձեր ընտանիքը կամ ընկերները որպեսզի վկա լինեն ձեզ համար:
- Դուք իրավունք ունեք դատի ներկայացնել փաստաթղթեր եւ դատակոչել վկաներ եւ հայտնաբերման միջոցով տեղեկություն ձեռք բերել:
- Դուք իրավունք ունեք պահանջելու հոգեկան վիճակի անկողմնակալ գնահատում խնամակալության անհրաժեշտությունը ճշտելու համար:



- Շրջանի ընկերային հարցերով զբաղվող աշխատողը ձեզ կօգնի գտնելու եւ հոգալու ձեր բնակարանը:
  - Բուժքույրը կայցելի ձեր բնակարանը ձեր դեղորայքի ընդունումը եւ ֆիզիկական առողջությունը հսկելու համար:
  - Տնային Օժանդակության Ծառ այությունների աշխատողը ուսելիք կպատրաստի:
  - Շրջանի հոգեկան առողջապահության վերականգնման մասնագետը ձեզ կօգնի որպեսզի դուք կարողանաք պատրաստել ձեր անձնական ճաշերը ամեն օր:

**ԻՆՉՊԵ՞Ս ՊԵՏՔ Է ՊԱՏՐԱՍՏՎԵՄ ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ**

- Հարդարվեք եւ հագնվեք որքան հնարավոր է կոկիկ:
- Հանդարտ մնացեք նույնիսկ եթե համաձայն չեք ուրիշները ինչ կասեն ձեր մասին:
- Ընդունեք եթե բժիշկը ձեր մասին ապի որ դուք հոգեկան խանգարման վիճակ ունեք:
- Բացատրեցեք պատճառը եթե համաձայն չեք բժիշկի ախտաճանաչմանը:
- Ընդունեք եթե բժիշկը դեղորայք հանձնարարի:
- Բացատրեցեք պատճառը եթե համաձայն չեք բժշկի հանձնարարություններին:
- Պատրաստեցեք անհատական ծրագիր, ցույց տալու համար որ դուք կարող եք հոգալ ձեր սնունդը, հագուստն ու պատսպարանքը:
- Ձեռք բերեք գրավոր հաստատումներ կամ վկայություններ երրորդ կողմի օժանդակության մասին, եթե անհրաժեշտ լինի:

**Ի՞ՆՉ Է ԵՐՐՈՐԴ ԿՈՂՄԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Երրորդ կողմի օժանդակությունը օգնություն է ընտանիքի անդամների, ընկերների կամ համայնքում գործող գործակալությունների կողմից վստահ լինելու համար որ դուք սնունդ, հագուստ ու պատսպարան ունեք: Օրինակի համար.

- Ձեր մայրը ձեզ կօգնի ձեր SSI-ի նպաստների տնտեսման հարցում:
- Ձեր ամենամոտ ընկերը կայցելի ձեզ ամեն օր կամ ձեզ հետ կապի:

**Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵԼ ԻՄ ԽՆԱՄԱԿԱԼԸ**

- Դուք ձեր կամեցած որեւէ անհատի կարող եք նշանակել որպես ձեր խնամակալ:
- Օրենքը պարունակում է նախընտրությունների ցուցակ սկսելով ձեր ընտանիքի անդամներից:
- Դատավորն է որոշում թե ումը կնշանակի:
- Շրջանի հանրային հսկիչը կարող է նշանակվել եթե ուրիշ որեւէ անհատ չգտնվի:

**ՈՐՔԱ՞Ն ԿԱՐՈՂ Է ՏԵԻԵԼ LPS ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ**

LPS Խնամակալությունը կարող է տեսել առավելագույնը մինչեւ մեկ տարի: Տարվա վերջում կարող է դատարանում վերանորոգվել:

**Ի՞ՆՉ Է ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ LPS ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ**

Ժամանակավոր LPS-ը այն է երբ դատավորը մինչեւ 30 օր, ձեր համար որոշումներ կայացնելու համար անհատ է նշանակում: Միայն Շրջանի խնամակալության հետաքննիչն է որ կարող է խնդրել այս: Սովորաբար, սա արվում է այդ ընթացքում ձեզ հիվանդանոց պահելու համար: Բայց դուք իրավունք ունեք տեղափոխվելու հարմարագույն եւ նվազագույն սահմանված ությամբ միջավայր: Դուք նաեւ իրավունք ունեք ստանալու ազդագիրի ժամանակավոր խնամակալություն հաստատվելուց նվազագույնը հինգ (5) օր առաջ: Եթե դուք դեմ եքի ապա դուք կարող եք լսում պահանջել:

## **Ի՞նչ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՄ ԿՈՒՆԵՆԱՍ ԵԹԵ ԵՄ ՆՇԱՆԱԿՎԵՄ ԼԲՍ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ**

- Դուք իրավունք ունեք ծառայություններ եւ օժանդակություններ ստանալու որպեսզի խնամակալությունը անհրաժեշտ չլինի:
- Դուք իրավունք ունեք ձեր անձնական հագուստները հագնելու, անհատական հեռախոսային կապեր անելու, չբացված նամակագրություն ստանալու, այցելուներ ունենալու, անհատական պահեստատեղ ունենալու, ձեր սեփական դրամից պատշաճ գումար եւ այլ իրավունքներ պահելու:
- Դուք իրավունք ունեք առնչվելու բուժման եւ տեղադրման որոշումներում:
- Դուք ձեր մարմնի վերաբերյալ ունեք ինքնորոշման հիմնական իրավունքը:
- Որպես ճանաչում ինքնորոշման իրավունքի արտասովոր բուժումների համար պետք է ձեռք բերվի իրազեկ պահող համաձայնություն:
- Ենթադրվում է որ դուք կարողությունը ունեք իրազեկ պահող համաձայնություն հայթայթելու: Ձեզ օգնելու համար փոխարքերակային հաղորդակցական սարքերի կարիքը կարող է լինի:
- Դուք կարող եք որոշումներ կայացնել բացի այն դեպքում երբ գտնվի թե դուք որոշումներ կայացնելու կարողությունը չունեք:

## **Ո՞վ է ՈՐՈՇՈՒՄ ԵԹԵ ԵՄ ԻՄ ԱՆՁՆԱԿԱՆ ԲՈՒԺՈՒՄՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿԱՅԱՅՆԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՆԵՄ**

Դատավորն է որոշում թե ինչպիսի իրավունքներ ձեզանից պետք է առնվեն: Այս որոշումը հիմնված է Շրջանի խնամակալության հետաքրքիր տեղեկագրության հիմունքի վրա: Տեղեկագրությունը կարող է հանձնարարել որ հետեւյալ իրավունքները վերցվեն ձեզանից.

- Զվեարկելու իրավունք,
- Պայմանագրությունների մեջ ընդգրկվելու իրավունք,
- Մեքենա վարելու իրավունք,
- Տրազեն ունենալու իրավունք,
- Ձեր հոգեկան վիճակի մասին բուժման վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավունք, եւ
- Այլ բուժումների վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավունք:

## **ԻՆՉՊԵ՞Ս Է ԴԱՏԱՎՈՐԸ ՈՐՈՇՈՒՄ ԹԵ Ո՞Ր ԻՐԱՎՈՒՆՔԸ ՄԵՐԺԻ ԻՆՉ**

Դատավորի որոշումը թե որ իրավունքը պետք է վերցվի ձեզանից, հիմնված է յուրաքանչյուր հատուկ իրավունք գործադրելու ձեր ունակության մասին ներկայացված փաստերի վրա: Օրինակի համար.

- Դուք պետք է պահեք քվեարկելու իրավունքը եթե դուք հասկանում եք թե ինչու եւ գրանցվում քվեարկման համար:
- Դուք պետք է պահեք բուժման վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավունքը եթե դուք հասկանում եք հանձնարարված բուժման օգուտներն ու վնասները եւ կարող եք նախընտրություն անել հարմար տարբերակի համար:

## **Ի՞նչ է ԱՆՈՒՄ ԽՆԱՄԱԿԱԼ**

- Խնամակալի պաշտոնն է ձեզ համար գտնել բնակավայր ձեր կարիքներին հարմարվող ամենաամբողջացված միջավայրում:



- Խնամակալի պաշտոնն է ձեզ օգնել սնունդ, հագուստ, առողջապահական խնամք ու պատսպարան ձեռք բերելու հարցում:
- Խնամակալի պաշտոնն է ձեզ օգնել ծառայություններ ձեռք բերելու հարցում՝ զարգացնելու ձեր կարողությունը որպեսզի ապրեք առավել ինքնուրույն:
- Դատարանը կարող է խնամակալին լիազորել կարգավորելու եւ տնտեսելու ձեր կալվածքը: Սա կոչվում է “կալվածքի խնամակալ”: (Stu PAI Probate Conservatorship-ի գրքույկը)
- Խնամակալության վերաբերյալ հաստատագրերը հատկանշում են ձեր խնամակալի պատասխանատվությունները, եւ ձեզանից վերցված օրինական իրավունքները:

**Ի՞ՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՄ ԵԹԵ  
ԴԱՏԱՐԱՆԸ ՈՐՈՇԻ ՈՐ ԵՄ ԸՆԴՈՒՆԱԿ  
ՉԵՄ ԲՈՒԺՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ**

Խնամակալի պաշտոնն է ձեր ցանկությունների հիման վրա որոշումներ կայացնել: Սա նշանակում է որ դուք իրավունք ունեք առնչվելու բոլոր բուժումներին վերաբերվող որոշումներին: Խնամակալը պետք է համաձայն լինի ձեր նախընտրածներին բացի այն դեպքում երբ ձեր նախընտրածները բժշկականորեն պատշաճ չեն:

**Ի՞ՆՉ ԿԱՐՈՂ ԵՄ ԱՆԵԼ ԵԹԵ  
ՀԱՄԱՉԱՅՆ ՉԵՄ ԻՄ ԽՆԱՄԱԿԱԼԻ ՀԵՏ**

Դուք կարող եք դատական լսում պահանջել եթե կարծում եք որ ձեր խնամակալը հարկ եղածից ավելի իշխում է ձեր կյանքի վրա կամ Ձեզ տեղավորել է չափազանց սահմանված միջավայրում:

- Դուք կարող եք “վերալսում” պահանջել այն իրավունքի վերաբերյալ որ ձեզանից վերցվել է տրվել է ձեր խնամակալին:
- Դուք կարող եք “տեղափոխման վերանայման լսում” պահանջել ավելի քիչ սահմանված եւ ավելի ամբողջացված միջավայր տեղափոխվելու համար:
- Դուք կարող եք վերալսում պահանջել խնամակալ նշանակվելուց հետո որեւէ ժամանակ:
- Այնքան ժամանակ որ վերալսում է պահանջվել, դուք նույն հարցի կապակցությամբ երկրորդ վերալսում չեք կարող պահանջել մինչեւ վեց (6) ամիս:
- Դուք միշտ կարող եք առարկել ձեր տեղափոխումը կամ արգելափակման պայմանները ներկայացնելով habeas corpus

հրամանագիր: “habeas corpus հրամանագիր” նշանակում է որ մեկը ձեզ արգելափակում է եւ դուք իրավունք ունեք հարցապնդելու պատճառը:

**ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ՉԵՐԲԱԶԱՏՎԵԼ  
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ**

- Դուք կարող եք ՓվերալսումՓ պահանջել դուք ինքներդ ձեզ խնամակալ հանդիսանալով որեւէ ժամանակ մինչեւ որ դատավորը ձեզ համար խնամակալ նշանակելը:
- Այնքան ժամանակ որ դուք ձեր իրավիճակի վերաբերյալ “վերալսում” եք պահանջել դուք ինքներդ ձեզ խնամակալ հանդիսանալով, դուք պետք է սպասեք վեց (6) ամիս նման լսում պահանջելու համար:
- Ձեր խնամակալությունը ինքնաբերաբար դադարեցվելու է մեկ տարի հետո, բացի այն դեպքում երբ Շրջանը փորձի այն վերահաստատել:

**ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ԱՌԱՐԿԵԼ  
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՄԱՆ  
ՀԱՄԱՐ**

- Շրջանը պետք է ձեզ զգուշացնի LPS խնամակալության դադարեցումից նվազագույնը երեսուն (30) օր առաջ եթե այն մտադիր է վերահաստատում փորձել:
- Այլապես, վերահաստատման առարկելու ձեր իրավունքները հիմնականում այն են ինչ որ են ձեր խնամակալություն նշանակվելու նախնական իրավունքները, որոնք քննարկվել են վերեւում:

Եթե դուք որեւէ հարցեր ունեք LPS խնամակալության վերաբերյալ, կապվեցեք ձեր  
**County Patients’ Rights Advocate-ի**  
Կամ  
**Public Defender-ի**  
Կամ  
**Protection & Advocacy, Inc.-ի** հետ  
1-800-776-5746 անվճառ հեռախոսահամարով.